ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«24» 01 2023թ.
№ 7461.3/2-20

«Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02590297)
տնօրեն Ա. Ղազարյանին
հասցե՝ ՀՀ ք. Երևան, Սեբաստիա 85
էլ. հասցե՝ sportcity-arm@yandex.ru
հեռ. 010-77-17-99, 091-42-05-70

ՀՀ պաշտպանության նախարարության և «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի միջև 12.04.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-2/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ն 2022թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, ի թիվս այլ ապրանքների պետք է մատակարարեր 40 հատ մարմնամարզական պարաններ (Ձգման պարան), սակայն «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ Պայմանագրի շրջանակներում այդ ապրանքները չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) և «բ» (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) ենթակետերը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հունվարի 23-ին, միակողմանի մասնակի, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 22 792 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 5180 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրին կից տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու համար Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է 103 600 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է 155 400 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին: Ընդ որում, Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները մինչև 01.02.2023թ. ներառյալ, Ձեր կողմից վճարվելու դեպքում՝ «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 01.02.2023թ. ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ